

Քիւ 25967
Օգոստոս 9, 1978

Մեծայարգ
Տիար Գէորգ Արսլանեան
Գլխավէնտ.

Սիրելի Տիար Արսլանեան,

Ժամանակին ստացած ենք Յունիս 19, 1978 թուակիր ձեր նամակը:

Ինչպէս որ Տիթրոյթի մէջ գումարուած Թեմական Գատգամա-
ւորական ժողովի ընթացքին ձեզի յայտնեցինք՝ Եկեղեցւոյդ
ծիական Խորհուրդի ատենապետին հետ խօսած ենք ձեր նամակին
մէջ արժանազրուած հարցի մասին: Կը սպասենք որ այս կապակ-
ցութեամբ ձիական Խորհուրդը իր կարգադրութեան մասին մեզի
տեղեկագիր մը ներկայացնէ:

Մինչեւ բարւոք կարգադրութիւն մը՝ մենք թելադրած ենք
համայնքիդ Հոգեւոր Հովիւին որ իր լաւագոյնը ընէ դժուա-
րութեանց եւ անհասկացողութեանց առաջը առնելու համար,
եւ համերաշխ մթնոլորտ մը ստեղծէ համայնքի հոգեւոր, մը-
շակութային, ազգային եւ ընկերային կեանքի բարգաւաճման
համար:

Ձեզի եւ ձեր ազնիւ տիկնոջ կը ցանկանք առաւել առողջու-
թիւն եւ երկար կեանք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ